Մ. Պ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռազմական ինտերվենցիան և քաղաքացիական կռիվները ծայրահեղորեն քայքայել էին Ռուսաստանի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Պահանջվում էր ձեռնարկել բոլոր միջոցառումները սովետական հանրապետությունը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար։

Կոմունիստական կուսակցության X համագումարը (1921 թ. մարտ) քննարկելով սովետական կարգերի ամրապնդման և ժողովրդական տնտեսության վերականգնման անհետաձգելի հարցերը, որոշեց պարենմասնատրումը փոխարինել պարենհարկով, որը նշանակում էր կատարել մի շրջադարձ ռազմական կոմունիզմից դեպի նոր տնտեսական քաղաքականությունը, դեպի բանվոր դասակարգի ու գյուղացիության տնտեսական զոդումը, որը տանում էր դեպի նրանց դաշինքի ամրապնդումը։ Առանց գյուղացիության հետ ամուր դաշինքի, բանվոր դասակարգը չէր կարող կառուցել սոցիալիզմ։

Նէպ-ը որպես պրոլետարական պետության հատուկ քաղաքականություն, որն սկզբնական շրջանում թույլատրեց կապիտալիզմի որոշ աշխուժացում երկրում՝ հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվելու պայմանով, նկատի ուներ սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստականի նկատմամբ և սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը մեր երկրում։

Նոր տնտեսական քաղաքականության իրականացման առաջին տարին ցույց տվեց, որ դա միակ ճիշտ քաղաքականությունն էր։ Սովետական պետությունն արագ կերպով բուժում էր իր վերքերը, վերածնվում էր պատերազմից քայքայված ժողովրդական տնտեսությունը, հզորանում էր պրոլետարիատի դիկտատուրայի տնտեսական և ռազմական կարողությունը, ամրապնդվում էր բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Պարենմասնատրման քաղաքականության վերացումից հետո միջակ գյուղացիները սովետական իշխանությանն օգնում էին պայքարելու կուլակային բանդաների դեմ։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում, ըստ Վ. Ի. Լենինի, նէպ-ը դառնում է պարտադիր քաղաքականություն, որն իր արդարացումը գտավ սոցիալիստական բոլոր հանրապետությունների պրակտիկ կյանքում։

Նէպ-ի ճիշտ ուղիով գնացին նաև Անդրկովկասն ու Հայաստանը։ Սակայն դա չէր նշանակում, որ նէպ-ը նույնությամբ պետք է կիրառվեր Անդրկովկասի հանրապետություններում, ինչպես այն կիրառվում էր Ռուսաստանում, առանց հաշվի առնելու տեղական պայմաններն ու առանձնահատկությունները։

Այս առանձնահատկությունների և տարբերիչ գծերի մասին Հայաստանի Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանը, դեռևս 1920 թ. դեկտեմբերի 9-ին, ՀԿԿ Կենտկոմում «Ընթացիկ մոմենտի մասին» տված իր զեկուցման մեջ

փայլուն դատողությամբ ասաց, որ «Տնտեսական քաղաքականությունը երբեք չի կարելի միակերպ անցկացնել ամբողջ երկրում, նա կախված է երկրի տնտեսական վիճակից։ Տվյալ դեպքում Հայաստանի նկատմամբ չի կարելի անցկացնել Խորհրդային Ռուսաստանի և նույնիսկ Ադրբեջանի տնտեսական քաղաքականությունը»[1]։

Վ. Ի. Լենինը դեռևս 1921 թ. մարտի 2-ին վրացական կոմունիստներին, ապրիլի 9-ին Ս. Օրջոնիկիձեին և ապրիլի 14-ին Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, լեռնականների Հանրապետության կոմունիստ ընկերներին գրած պատմական դիրեկտիվ նամակներում նէպ-ին անցնելու և այն ճիշտ կենսագործելու մասին նախազգուշացնում էր, որ «ոչ թե ռուսական շաբլոնը կիրառել, այլ հմտորեն և ճկունորեն ստեղծել յուրօրինակ մի տակտիկա մանրբուրժուական տարրերի հանդեպ»[2]։

Անդրկովկասի սոցիալիստական հանրապետությունների կոմունիստական կուսակցություններն այս խնդիրները կենսագործելիս հաշվի էին առնում Ռուսաստանի հարուստ փորձը, բայց խուսափում էին ընդհանուր շաբլոնից։ «Չընդօրինակել նույնությամբ մեր տակտիկան,— մատնանշում էր Վ. Ի. Լենինը,— այլ ինքնուրույն կերպով կշռադատել նրա յուրօրինակության պատճառները, նրա պայմաններն ու արդյունքները, կիրառել 1917—1921 թվականների փորձի ոչ տառը, այլ ոգին, իմաստը, դասերը»[3]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, Վ. Ի. Լենինի այս ցուցումներից արեցին անհրաժեշտ եզրակացություն և իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին Հայաստանի հետամնաց ու քայքայված գյուղատնտեսության վերականգնման հարցի վրա։ Պետք էր «իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքներ։ Ոռոգումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[4]։

«Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ»[5] Վ. Ի. Լենինի այս արտահայտությունները, նէպ-ին անցնելու նախօրեին, դարձան Հայաստանի կոմունիստական կուսակցության նշանաբանը։

Ոգևորված կուսակցության X համագումարի որոշումներով, Հայաստանի կուսակցական, կոմերիտական և պրոֆմիութենական կազմակերպությունները մասսաներին պարզաբանեցին նոր տնտեսական քաղաքականության էությունը, ամենուրեք ձեռնամուխ եղան սոցիալիստական տնտեսության կառուցման լենինյան քաղաքականության կիրառման վեհ գործին։ Նոր տնտեսական քաղաքականությունը կիրառելիս հնարավոր սխալներից խուսափելու համար, ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի կառավարությունը հանգամանորեն ուսումնասիրում էին տեղի բոլոր պայմաններն ու առանձնահատկությունները։ Մինչև նէպ-ին անցնելը նրանք ձեռնարկում էին նախնական միջոցառումներ գյուղացիական մասսաներին այդ նոր քաղաքականությանը ընտելացնելու համար։ Այդպիսի միջոցառում էր 1921 թ. ապրիլի 16-ի «Պարենային բռնագրավում-

1 «Կոմունիստ», № 7, 1920 թ.։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 190։
3 Նույն տեղում, էջ 404։
4 Սույն տեղում։
5 Նույն տեղում։

ների վերացման մասին» և նույն ամսի 29-ի «Բոնագրավումների ամբողջական վերացման մասին» Պարենային ժողովրդական կոմիսարիատի հրամանները, որոնք ազդարարում էին, որ այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավումները, նույնպես և կայուն գները շուկայում,— ասված էր առաջին հրամանում, իսկ երկրորդում՝ ուղղակի արգելվում էր ամեն տեսակի բռնագրավումները և խուզարկությունները թաքցրած մթերքները հայտնաբերելու նպատակով։

Հայաստանի ՍՍՀ կառավարությունը խորությամբ ըմբռնելով կուսակցության X համագումարի որոշումը նոր տնտեսական քաղաքականության մասին, 1921 թ. հունիսի 24-ին հրապարակեց «Պարենտուրքի մասին» դեկրետը։ Այդ դեկրետով սահմանվում էր պարենհարկի նվազագույն չափ, որով բարձրացվում էր գյուղացիների շահագրգռվածությունը քայքայված գյուղատնտեսությունը վերականգնելու և այն զարգացնելու գործում։

ՀՍՍՀ Ժողկոմսովետի դեկրետում ուղղակի ասված էր. «Սահմանվող տուրքը պետք է լինի պրոգրեսիվ։ Նա պիտի հավաքվի իբրև մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսության ընդհանուր արդյունքից, իսկ նրա չափը պիտի որոշվի բերքի հաշվառքով և սպառողների թվով»[6]։

Դեկրետով գյուղացուն լիակատար իրավունք էր տրվում պարենհարկը տալուց հետո, տնտեսության վաստակած ավել եկամուտը ազատ կերպով հանել շուկա վաճառքի կամ փոխանակության համար։

Հայաստանի կառավարության դեկրետը լայն արձագանք գտավ և ջերմ համակրանքի արժանացավ աշխատավոր ժողովրդի կողմից։ Հանրապետության շատ գավառներից աշխատավորները գրում էին Կենտրոնական կոմիտեին և իրենց գոհունակությունը հայտնում պարենհարկի քաղաքականության կիրառման մասին, որովհետև, ըստ կառավարության դեկրետի, բոլոր չքավորական տնտեսություններն ազատվում էին պարենհարկից, իսկ միջակ տնտեսություններն արտոնություններ էին ստանում և խրախուսվում տնտեսության վերականգնման ու զարգացման նախաձեռնության համար։ Դրա միակ նպատակը գյուղացու նյութական շահագրգռվածության, գյուղի և քաղաքի միջև վերսկսված առևտրի ու ապրանքաշրջանառության աշխուժացումն էր, ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերականգնումն ու զարգացումը։ Ինչպես ամբողջ սովետական երկրում, այնպես էլ Հայաստանում ժողովրդական տնտեսության զարգացումը սկսվեց գյուղատնտեսության վերականգնումից։

1921 թ. գարնանացանի կամպանիան հաջողությամբ կատարելուց հետո աշխատավորական մասսաները նախապատրաստվում էին պետությանը հանձնել առաջին պարենհարկը։ Չնայած երկրում ստեղծված ծանր կացությանը, կուսակցական կազմակերպությունների ամենօրյա միջոցառումների շնորհիվ կատարվում և գերակատարվում են պետական բոլոր պարտավորությունները։ Առաջին տարվա համար նախատեսված 700 հազար փութ հացահատիկի տուրքը գանձվեց մոտ 1/3-ով ավելի։

Այս հաջողությունը Հայաստանի կոմկուսակցության քաղաքականության հաղթանակն էր ՆԷՊ-ի առաջին տարում, որը մեծ զայրույթ առաջ բերեց ջախջախված դասակարգային թշնամիների կողմից։

---

6 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 2, էջմիածին, 1921, էջ 28։

Չնայած ՀԿԿ Կենտկոմի նամակը՝ ուղղված Հայաստանի բոլոր կազմակերպություններին, և Ժողկոմխորհի դեկրետները պահանջում էին «ավելի զգուշ, ավելի դանդաղ» (Լենին) կիրառել նոր տնտեսական քաղաքականությունը, հնարավոր սխալներից խուսափելու համար, այնուամենայնիվ նէպ-ի կիրառման առաջին շրջանում տեղական կուսակցական և սովետական կազմակերպությունները թույլ էին տալիս սխալներ և շեղումներ։

ՀԿԿ Կենտկոմին և Ժողկոմխորհին աշխատավորները գրում էին նամակ-բողոքներ, որտեղ զայրույթով էին խոսում առանձին կուսակցականների և պարենային կոմիտեների կողմից կիրառվող բռնությունների մասին։ Ղուրդուղուլցի (Հոկտեմբերյան) մի գյուղացի «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրությանը գրում է. «Խորհրդային իշխանությունը սահմանել է պարենտուրք բոլոր գյուղացիներից հավասար գանձելու համար դեկրետը, բայց Ղուրդուղուլիի տեղական պարկոմի հրահանգիչը շեղում է դեկրետը և իր ցանկությամբ գյուղացիներից գանձում կրկնակին, որի համար հարկադրում է գյուղացիներին և պահանջում կատարել իր ցանկությունը։ Նման արարքը գյուղացիների մեջ առաջ է բերում դժգոհություն։ Նման պահանջները չկատարողներին բանտարկում են»[7]։

Նման և այլ բազմաթիվ փաստեր նկատվում են նաև Հայաստանի շատ շրջաններում ու գյուղերում։ X համագումարի որոշումները նոր տնտեսական քաղաքականության մասին անշեղորեն կենսագործելու և Հայաստանում թույլ տված սխալներն ու շեղումները շտկելու համար Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի և Պարենային ժողկոմ Իվանյանի ստորագրությամբ 1921 թ. նոյեմբերի 18-ի «Պարենտուրքի գանձման աղավաղման մասին» շրջաբերականում ասված է. «Մեր ստացած տեղեկությունների հիման վրա պարենտուրքի գանձումը տեղ-տեղ կրում է անօրինաչափ բնույթ և առաջացնում է գյուղացիության մեջ բողոքներ ու անբավականություն։

Երբեմն այս հողի վրա տեղի են ունենում մասսայական բանտարկություններ։ Նման երևույթը գյուղացիության լայն խավերում ստեղծում է սառնություն ու թերահավատ վերաբերմունք դեպի խորհրդային իշխանությունը»[8]։

Դասակարգային թշնամին օգտագործեց Հայաստանում նէպ-ի կիրառման ժամանակ որոշ տեղերում թույլ տրված սխալներն ու շեղումները և բացահայտ պայքարի ելավ սովետական իշխանության դեմ, նրա հասցեին տարածելով զրպարտություններ ու հերյուրանքներ։ Դաշնակցական հակահեղափոխական տարրերը և կուլակները խոյկվում էին կուսակցական ու սովետական ապարատները, դիտավորյալ պայմաններ ստեղծում նոր տնտեսական քաղաքականության աղավաղման և նրա ձախողման համար, անկյունից կրակում էին ակտիվիստների վրա, կազմակերպում դիվերսիաներ։

Դասակարգային թշնամու ոտնձգությունների մասին Հայաստանի արտակարգ հանձնաժողովի (ՎՔ) նախագահ Շավարշ Ամիրխանյանի 1921 թ. հոկտեմբերի 3-ի Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովին (ВЧК), Ժողկոմխորհին և ՀԿԿ Կենտկոմին ուղղված հեռագրում որոշակիորեն ասված էր. «...Երկրի տնտեսական վիճակը անբավարար է։ Պարենհարկը գնում է հաջողությամբ։ Պարենհարկի հանձնաժողովներում զգացվում է փորձ-

7 «Խորհրդային Հայաստան», № 248, 1921։
8 Նույն տեղում, № 220, 1921։

ված աշխատողների կարիքը։ Էջմիածնի գավառում հակահեղափոխականները և կուլակները պարենհարկի մասին կազմակերպում են պրովոկացիա, ցանկանում են քայքայել պարենհարկը, բայց առանց արդյունքի։ ...Բոլոր գավառներում, ինչպես նաև Երևանում նկատելի է հակասովետական կուսակցությունների աշխատանքը։ Լուրեր են տարածվում, որ Գյանջան (Կիրովաբադ), Ազստաֆան գրավել են մուսավաթականները, իսկ ամբողջ Դաղստանը՝ ինգուշները, այնպես որ սովետական իշխանությունը կպահպանվի մի քանի շաբաթ»[9]։

ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն և ժողովրդական կոմիսարների խորհուրդը քննարկելով նոր տնտեսական քաղաքականությունն անշեղորեն կենսագործելու և պարենհարկի գանձման հարցում թույլ տված սխալները շտկելու մասին հարցերը, ձեռնարկում են կոնկրետ միջոցառումներ կարգավորելու պարենհարկի չափը, չքավոր գյուղացիությանը հարկադրումից ազատելու, գյուղի և քաղաքի փոխհարաբերության բարելավումը, ապրանքափոխանակության շրջանառու միջոցների զարգացումը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման և այլ հարցեր։

Հայտնի է, որ դաշնակցության փետրվարյան ավանտյուրայի ժամանակ Դարալագյազի գավառը կրկնակի ավերածությունների է ենթարկվում, որի պատճառով գավառի աշխատավորությունն ապրում էր նյութական ծանր պայմաններում և ի վիճակի չէր պետությանը հարկ վճարել։ Գավառային կոմիտեի քարտուղար Թովմասյանի ահազանգերն այդ մասին ուսումնասիրվում է ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ավիսի (Նուրիջանյանի) կողմից և հարցը մտցվում ԺողկոմխորՀ՝ Դարալագյազի գավառի գյուղացիներին հարկադրումից ազատելու համար։ ԺողկոմխորՀը 1921 թ. դեկտեմբերի 13-ի (արձանագրություն № 86) իր նիստում որոշում է. «Առաջարկել պարժողկոմին վերացնելու պարենտուրքը Դարալագյազի գավառում»[10]։

Այս և նման բազմաթիվ փաստեր խոսում են սովետական պետության կողմից աշխատավորության նկատմամբ ջերմ հոգատարության մասին, որն ավելի քան ամրապնդում է հայ աշխատավորության նվիրվածությունը իր հարազատ պետությանն ու կոմունիստական կուսակցությանը։

Հայաստանի գավառային ու շրջանային կուսակցական կազմակերպությունները, 1921 թ. սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսներին, X համագումարի որոշումների լույսի տակ, քննարկում են պարենտուրքի քաղաքականության կիրառման առանձնահատուկ պայմանները Հայաստանում, շտկում պրակտիկայում թույլ տված սխալներն ու թերությունները և մարտականորեն լծվում նրա անթերի կատարմանը։

ՀԿԿ Կենտկոմի ցուցումով սեպտեմբեր—հոկտեմբեր ամիսները Հայաստանի գավկոմները հայտարարում են պարենտուրքի հավաքման ամիսներ։ Գավկոմների որոշմամբ գավառների և գավառակների կուսակցական և սովետական ակտիվը մոբիլիզացվում և գյուղ է ուղարկվում պարենհարկի գանձման հարցերը կազմակերպելու համար։ Այդ նպատակով գյուղ են ուղարկվում. Դիլիջանի գավառից 25 հոգի, Ալեքսանդրապոլի գավառից՝ 32, Էջմիածնի

---

9 ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մարքսի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 172, թ. 1։

10 Նույն տեղում, գ. 174, թ. 138։

գավառից՝ 45 հոգի[11], որոնք հսկայական գործունեություն են ծավալում գյուղում և բարձրացնում աշխատավոր գյուղացու հայրենասիրական ոգին։

Ահա թե Լոռու գավառի Հաղպատ գյուղի գյուղացիները ինչպիսի բարձր զգացմունքներ են արտահայտում պարենհարկը պետությանը հանձնելիս.

«Ճանապարհ տվեք, այդ մենք ենք գալիս, մենք՝ կալվածատերերից և բռնակալներից ամենից շատ ճնշված, հեղափոխության ճանապարհին մարզված, խորհրդային իշխանության կարոտ հաղպատցիներս, պարենտուրքով, դրոշակներով։

Էս ի՞նչ տուրք է, որ չկարողանանք տալ, էն էլ մեր սիրելի, մեր ստեղծած խորհրդային իշխանության հիմքերը ամրացնելու համար։

Մեզնից դեռ ոչ ոք չի մոռացել Բարաթովին, Արամյանին և հազար ու մի զիբիլին խարջ տալը։ Որ հաշիվ ենք անում, էս պարենտուրքը նրա մեկտասներորդ մասն էլ չի կազմում։

Ի՞նչ անենք, որ դժվար ժամանակ է, հենց մեր ղոչաղությունն էլ նրանումն է կայանում ու կերևա մեր թշնամիների աչքում, որ էս նեղ ժամանակը օգնենք մեր սիրելի իշխանությանը։

Մենք, ամենաչունևոր գյուղացիներս, տոթից ու կարկուտից վնասված, ահա կանգնած ենք կարմիր դրոշակներով և պատրաստ խորհրդային իշխանության ամեն մի կոչին։

Նեղ օրեր շատ ենք քաշել, էլի կքաշենք, բայց էս վերջին նեղությունը, եթե միայն նեղություն է, մեր սրտերին շատ մոտիկ նեղություն է»[12]։

Հաղպատցիների օրինակը մեծ չափով ոգևորեց Հայաստանի բոլոր աշխատավորներին, որոնք մեծ խինդով, կոմունիստական կազմակերպությունների գլխավորությամբ կատարում էին պարենհարկի գանձման պատասխանատու խնդիրը։

Չնայած 1921—1922 թթ. հանրապետությունը գտնվում էր նյութական ծանր կացության մեջ և սովը ահավոր սպառնալիք էր դարձել աշխատավորության համար, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները գերագույն ջանքեր են գործադրում պարենտուրքի գանձման ճակատում, քաջ գիտակցելով, որ պարենտուրքի գանձումը, հացի փոխառության[13] և ապրանքափոխանակության ծավալման կազմակերպումն ու ներքին շուկայի ստեղծումը, ամենալավագույն միջոցներն են մոլեգնող սովի դեմ պայքարելու համար։

Երևանի գավառի Ներքին Ախտայի կուսակցական շրջանային կոմիտեն 1922 թ. բերքահավաքը հաջողությամբ կատարելու համար բոլոր գյուղերում կազմակերպում է կուս. բջիջների, գյուղսովետների և աշխատավորների ժողովներ, որտեղ քննարկվում են բերքահավաքի հրատապ հարցերը։ Շրջանային կոմիտեն մոբիլիզանցում է ինչպես շրջանային, այնպես էլ գյուղական ակտիվին և նրանց ամրացնում գյուղերին մինչև բերքահավաքի վերջը։ Այդ միջոցառումների հետևանքով, կարճ ժամանակամիջոցում, շրջանի գյուղերում հավաքում են հաջող բերք և 90—95 տոկոսով հանձնում իրենց տուրքերը։

---

11 Նույն տեղում, գ. 169, թ. 4—6։

12 «Կարմիր Լոռի», № 68։

13 1922 թ. հուլիսի 26-ին Հայաստանի Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանը հաստատեց հացի ներքին պետական փոխառության օրինագիծ։ Համաձայն այն օրինագծի ֆինժողկոմատը իրավունք է ստանում բաց թողնել այդ փոխառության համար պարտաթղթեր՝ առանց տոկոսի, մինչև 300.000 փութ ցորենի արժեքով։

Նման միջոցառումների շնորհիվ Հայաստանի բոլոր գավառներում հաջողությամբ գանձվում է բնատուրքը։ Ժողկոմխորհի որոշմամբ Հայաստանի 1002 գյուղերը, որոնք միավորում են 119.856 տնտեսություններ, հարկադրվում են 1.127.281 փութ ցորենով, որից արդեն նոյեմբերի սկզբներին գանձվել էր 715.684[14] փութ, կամ 63,5 տոկոսը։

Դսեղի շրջանի (Թումանյանի) Աթան գյուղի կուսակցական կազմակերպության ագիտացիոն-մասսայական և բացատրական աշխատանքների շնորհիվ գյուղացիները ժամկետից շուտ պետությանն են հանձնում պարենհարկի իրենց պարտքերը, որի համար ամբողջ գյուղը հոկտեմբեր ամսին բարձրանում է կարմիր տախտակին։

Ամփոփելով պարենհարկային կամպանիայի արդյունքները, Վ. Ի. Լենինը 1921 թ. դեկտեմբերին ասաց. «Պարենհարկն ընդհանուր առմամբ ամբողջ գյուղացիական մասսային, վերցրած ամբողջ գյուղացիությունը, թեթևություն բերեց։ Դա ապացույցներ չի պահանջում։ Բանը ոչ միայն այն է, թե ինչ քանակությամբ հաց է վերցված գյուղացուց, այլ այն, որ գյուղացին իրեն ավելի ապահով զգաց պարենհարկի դեպքում և բարձրացավ նրա տնտեսական շահագրգռվածությունը։ Ջանասեր գյուղացու առաջ արտադրողական ուժերի բարձրացման դեպքում պարենհարկն ավելի լայն ճանապարհ էր բացանում»[15]։

Նոր տնտեսական քաղաքականությունը իր հետ բերեց նաև գյուղացիության հարկման նոր քաղաքականություն, որը բխում էր Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական առանձնահատկություններից։

Գյուղացիության հարկումը սովետական իշխանության այն ճիշտ քաղաքականությունն էր, որով ստեղծում էր մթերքների պաշարներ՝ կարմիր բանակի բանվորների, ծառայողների, մանկատների, հիվանդանոցների, 200 հազարից ավելի գաղթականության և սերմանման պահանջները բավարարելու համար[16]։

Սակայն հանրապետության աշխատավորության նյութական բարեկեցության բարելավման հետ միասին, հետագա տարիներին, նվազում է նման հարկային քաղաքականության դերը։

Քաղաքացիական կռիվներից հետո, երբ երկիրը ծայրահեղ կարիքի մեջ էր, Հայաստանում 1921 թ. կիրառվեց բազմատեսակ պարենհարկի սիստեմ, 1922 թ., ըստ ՀԿԿ Կենտկոմի և կառավարության որոշման, այն փոխարինվեց միասնական բնահարկով։ Իսկ գյուղատնտեսական միասնական հարկ մտցրվեց հանրապետությունում ըստ Անդրկովկասյան Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1923 թ. ապրիլի 23-ի և 1924 թ. ապրիլի 24-ի դեկրետների։

1921 և 1922 թվականներին գանձվող հարկերը արվում էր միայն մոտավոր հաշիվներով և չէր համապատասխանում գյուղացու եկամուտին, իսկ հետագա տարիներին (1923—1924 թթ.) այն մոտեցավ եկամտահարկերի սիստեմին։

Դրամական անբավարար շրջանառության հետևանքով 1923 թ. սահմանվեց խառը հարկ՝ դրամով և հացահատիկով։ Գյուղացին շահագրգռված էր հարկը վճարել դրամով, որովհետև ցորենի ինքնարժեքը ցածր էր։ Նման դեպ-

14 «Խորհրդային Հայաստանը հինգ տարում», էջ 202, 1926 թ.։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 184։

16 Տե՛ս Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 24-ի «Պարենտուրքի մասին», Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1922 թ. ապրիլի 20-ի «Միասնական բնատուրքի մասին» դեկրետները։

քում գյուղացիները իրենց հասանելիք հարկի 80 տոկոսը մուծում էին դրամով։

Անգրկենտգործկոմի և ԺողկոմՍովետի դեկրետով ստեղծվեցին մի շարք արտոնություններ և շահագրգռվածություն գյուղատնտեսական առանձին ճյուղեր արագ կերպով վերականգնելու և զարգացնելու համար։ Ըստ այդ դեկրետի հարկումից ազատվում էին՝ բամբակագործները, 1921—1923 թվականներին իրենց հողերի վրա մելիորատիվ աշխատանքներ կատարող, փորձնական, ցուցադրական և սերմաբուծական դաշտերի, ազնվացեղ անասուններ աճեցնող, մեղվաբուծությամբ, շերամապահությամբ զբաղվող գյուղացիները։

Այս դեկրետը իր առավելություններով հանդերձ ուներ նաև լուրջ թերություններ։ Գյուղատնտեսական երկու ճյուղերը՝ հողագործությունը և անասնապահությունը խորը կերպով չուսումնասիրելու հետևանքով, թույլ էին տրվել հարկման անճշտություններ։ Հանրապետությունում հողագործությունն ավելի թույլ էր զարգացած, քան անասնապահությունը, սակայն հարկման ծանրությունն ընկել էր հողագործության վրա։ Այսպես, 1923 թ. Հայաստանում եղած 1063 գյուղեր, որոնք իրենց մեջ միավորում էին 137029 տնտեսություն և ունեին 454856 դեսյատին վարելահող, 11.570.000 փ. ցորեն, հարկվել էին 1.508.236 փութ ցորենով, որը արտադրանքի 13 տոկոսն էր կազմում, իսկ անասնապահությունը, որը, վերածած խոշոր եղջերավորի, ուներ 423.290 գլուխ և եկամուտը կազմում էր 8.474.052 փութ (ցորենի միավորով), հարկադրվել էր 158.549[17] փ. (ցորենի միավորներով), որը կազմում է արտադրանքի 2%-ը։

Բերված թվերը պերճախոս կերպով ասում են այն մասին, որ թույլ ես տրված որոշակի սխալներ, որից օգտվել են անասնապահական շրջանների կուլակային տնտեսությունները, հետևապես հարկի գլխավոր ծանրությունն ընկել էր միջակ գյուղացիության վրա, որը դեռևս բավականաչափ չէր ամրացել Հայաստանում։

Գյուղացիության նկատմամբ կիրառվող հարկային քաղաքականությունը լուրջ թերություններ ուներ նաև 1924 թ. Անդրկենտգործկոմի և ԺողկոմԽորհի դեկրետում, չնայած ՍՍՀՄ Խորհուրդների II համագումարը տվել էր որոշակի ուղղություն։ Գյուղացիների հարկումը իրականանում էր այսպես. կատարվում էր խմբավորում, ըստ որի հաշվի էր առնվում շնչին հասնող հողի և անասունի քանակը։ Նման մոտեցումը միայն շոշափում էր նրա արտաքին կողմը, հետևապես այն չէր կարող արտահայտել գյուղում գոյություն ունեցած շերտավորումները, որովհետև միայն հողի քանակը (առանց հաշվի առնելու նրա շահավետությունը) չէր կարող լիապես որոշել հարկադրվող տնտեսությունների ունևորության աստիճանը։ Այդ պատճառով լեռնային և նախալեռնային շրջանների տնտեսությունների մեծամասնությունը, չնայած իրենց տնտեսական ցածր մակարդակին, ընկավ բարձր խմբերի մեջ և ծանր հարկադրվեց։

Հարկային քաղաքականության մեջ թույլ տրված սխալների հետևանքով, 1924 թ. 150000 ռուբլի գյուղատնտեսական հարկից հուլիս և օգոստոս ամիս-

17 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը հինգ տարում», 1926, էջ 202։

ներին մուծվել էր միայն 3472 ռ. 74 կ., որը կազմում էր ընդհանուր պլանի 2,31 տոկոսը[18]։

Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի համապատասխան բաժինները խորը կերպով չէին ուսումնասիրել Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանները, հայ գյուղացու տնտեսական կարողությունները, նրանց հարկատվության աստիճանը, որի պատճառով էլ Հայաստանում ուժեղ կերպով էին արտահայտվում հարկային քաղաքականության աղավաղման դեպքեր։

Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի՝ Հայաստանն ուսումնասիրող հանձնաժողովի զեկուցագրում ասված է, որ Լոռի-Փամբակի գավառի 21.321 տնտեսություններ հարկադրվել են 366369 ռուբլի գումարով։ Բնակչությունն անկարող էր տալ այդ գումարը, որի պատճառով իջեցվում է հարկի չափը[19]։ Լոռու Գավկոմի ինֆորմացիայի մեջ ասված է, որ 1924 թ. «...հարկադրվել է չքավոր տնտեսությունների 37 տոկոսը, միջակների՝ 44 տոկոսը, իսկ կուլակների՝ 25,4 տոկոսը, որը հիանալի պայմաններ է ստեղծում կուլակային տնտեսությունների զարգացման համար»[20]։ Նման փաստեր եղել են նաև Լենինականի, Զանգեզուրի և Էջմիածնի գավառներում։ Չնայած 1923 թ. Անդրկենտգործկոմի և Ժողկոմխորհի դեկրետով վերացված էին բոլոր տեղական մաքր հարկերը, բայց առանձին գավառներում և շրջաններում շարունակում էր բաղմահարկյան նախկին սիստեմը, որը կրկնակի ծանրացնում էր աշխատավոր գյուղացու վիճակը և տեղիք տալիս առանձին դժգոհությունների։ Զանգեզուրի գավառի Ենձորեսկ գյուղի գյուղացիները տուրք էին վճարում դպրոցի համար՝ 229 ռուբլի, գյուղական կոմիտեի համար՝ յուրաքանչյուր շնչից 20 կոպեկ, գյուղի ծառայողներին աշխատավարձ տալու համար՝ յուրաքանչյուր ծխից 40 կոպեկ և միլիցիոներներին կերակրելու համար՝ 0,5 փութ հացահատիկ։ Նույն գավառի Ղարաքիլիսա գյուղի յուրաքանչյուր շունչ դպրոցին տալիս էր 5 ֆունտ ցորեն։ Այդ գյուղում անասունները վաճառելու դեպքում գյուղացուց գանձում էին մեկ ձիու համար 1 ռուբլի, խոշոր եղջերավոր անասունի համար՝ 50 կոպեկ, իսկ մանր եղջերավորների համար՝ 20 կոպ.[21]։

ՍՍՀՄ խորհուրդների III համագումարը (1925 թ.) գյուղացիության հարկային քաղաքականության մեջ զգալի բարեփոխություններ մտցրեց։ Համագումարի որոշմամբ հարկումից ազատվում էին մատղաշ անասունները և մատղաշ պտղատու տնկիները, նորատունկ այգիները, այն հողերը, որոնք 1925 թ. մելիորատիվ միջոցառումների շնորհիվ բերքատու են դարձել, ցուցադրական տնտեսությունները, համայնական այն հողերը, որտեղ աճեցնում են հասարակական սերմացու և այլն։

Որպես պարտադիր օրենք, գավառներում հարկող հանձնաժողովների մեջ մտնում էին կուսբջջի, գյուղխորհրդի, գյուղացիների և գյուղական փոխադարձ օգնության կոմիտեների ներկայացուցիչները։ Հանձնաժողովի հաշվառման արդյունքները քննարկվում և մասսայականացվում էին գյուղական ժողովներում։ Գյուղացուն լայն իրավունքներ էր տրվում մասնակցել նրա քննարկմանը և պահանջել՝ նկատված թերություններն անհապաղ վերացնել։

18 ՍՄԿԿ ԿԿ-ին կից Մ.Լ. արխիվ, ֆ. 17, ց. 16, գ. 313, թ. 256։
19 Նույն տեղում, գ. 241, թ. 82—84։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։

1925 թ. հարկային նոր օրենքը անշուշտ ուներ մեծ առավելություններ նախորդ տարիների համեմատությամբ, սակայն այն նույնպես զերծ չէր թերություններից, որոնք հարվածում էին առանձին տնտեսությունների առաջադիմությանը։ Այսպես, օրինակ՝ լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ շնչին պատկանող հողային տարածությունն ավելի մեծ էր, բայց նրա մեծ մասը չէր մշակվում և քիչ արդյունք էր տալիս, հարկումը բարձր էր։ Իսկ դաշտային շրջաններում, չնայած սակավահողությանը, հողն ավելի արդյունավետ էր ցանվում էր գրեթե ամբողջապես և բնակչության տալիս բարձր բերք, հարկումը ցածր էր։

Այս սխալներն ու թերությունները մի շարք լեռնային ու նախալեռնային գավառների ու շրջանների գյուղացիների մեջ առաջ էին բերում դժգոհություն (Դիլիջանի, Դարալագյազի, Գորիսի, Լոռու, Ղարաքիլիսայի և այլ գավառներ)։

Գավառային կուսակցական և սովետական կազմակերպությունները աստիճանաբար շտկում են թույլ տված սխալները։ Հանրապետության հարկման հանձնաժողովը ամեն մի շրջանի համար կիրառում է հարկման հատուկ նորմաներ, որի շնորհիվ հարկման չափերը որոշվում են յուրաքանչյուր շրջանի վճարունակության համապատասխան։ Իջեցվում է թույլ տնտեսությունների հարկերի չափը։

Հանրապետական հարկման հանձնաժողովը ստեղծում է հատուկ ֆոնդ՝ ընդհանուր եկամուտի 3 տոկոսի չափով, արտոնություն շնորհելու այն լեռնային և նախալեռնային շրջանների թույլ տնտեսություններին, որոնց համար դեկրետով արտոնություն չէր նախատեսված։

Այսպիսով, գյուղից վերցված բոլոր հարկերը սովետական իշխանության տարիներին անհամեմատ պակաս էին, քան նախապատերազմյան շրջանում։ Ցարական իշխանության օրոք գանձված հարկերը գյուղի վրա չէին ծախսվում, այլ օգտագործվում էին պետության ոստիկանական վերին ու ներքին օրգանների պահպանության համար, որոնք գյուղացուն պահում էին անընդհատ ճնշման տակ։

Սովետական իշխանության հինգ տարիներին, ինչպես նաև հետագայում, գյուղից վերցված հարկերն այլ ճանապարհներով և կրկնապատկված գումարներով վերադառնում էին գյուղ և ծախսվում ոռոգման, բամբակագործության, գյուղկոոպերացիայի և վարկի, լուսավորության, կուլտուրայի ու այլ բնագավառներում։